

Առողջապահության նախարարություն

COVID-19 Պատվաստման տեղեկատվական թերթիկ

Տարբերակ 5.0 - Ապրիլի 1, 2021թ.

Այս փաստաթուղթը տրամադրում է միայն հիմնական տեղեկատվություն և նախատեսված չէ տրամադրել կամ փոխարինել բժշկական խորհրդատվություն, ախտորոշում կամ բուժում, կամ իրավաբանական խորհրդատվություն:

Առայսօր Կանադայի Առողջապահության նախարարությունը Կանադայում թույլատրել է օգտագործել հետևյալ COVID-19 պատվաստանյութերը՝ [Pfizer-BioNTech COVID-19 vaccine](#) (Pfizer-BioNTech COVID-19 պատվաստանյութ), [Moderna COVID-19 vaccine](#) (Moderna COVID-19 պատվաստանյութ), [AstraZeneca COVID-19 vaccine](#) (AstraZeneca COVID-19 պատվաստանյութ), [COVISHIELD COVID-19 vaccine](#) (COVISHIELD COVID-19 պատվաստանյութ) և [Janssen COVID-19 vaccine](#) (Janssen COVID-19 պատվաստանյութ): Janssen COVID-19 պատվաստանյութի վերաբերյալ տեղեկատվությունը կավելացվի այս փաստաթղթում, երբ կհաստատվի դրա մատակարարումը Կանադա: Կանադայում օգտագործման համար թույլատրված բոլոր [vaccines for COVID-19](#) (COVID-19-ի պատվաստանյութերը) գնահատվել են Կանադայի Առողջապահության նախարարության կողմից՝ հիմնվելով խիստ չափանիշների վրա: Կանադայի Առողջապահության նախարարությունը կշարունակի վերահսկել բոլոր պատվաստանյութերը՝ համոզվելու համար, որ դրանք անվտանգ են և արդյունավետ:

Խնդրում ենք ուշադիր կարդալ այս տեղեկատվական թերթիկը և համոզվել, որ պատվաստանյութը ստանալուց առաջ առողջապահական խնամքի մատակարարը պատասխանել են ձեր բոլոր հարցերին:

Ինչ է COVID-19-ը

COVID-19-ը նոր կորոնավիրուսի համախտանիշով (SARS-CoV-2) հարուցված վարակ է: Առաջին անգամ COVID-19-ը հայտնաբերվել է 2019թ. դեկտեմբերին և դրանից հետո տարածվել ամբողջ աշխարհում՝ հանգեցնելով համաճարակի: Հիմնականում COVID-19-ը փոխանցվում է մեկ վարակված անձից մյուսներին, երբ վարակված անձը հագում, փռշտում, երգում, խոսում կամ շնչում է: Կարևոր է նշել, որ վարակված մարդիկ կարող են տարածել վարակը, նույնիսկ եթե չունեն ախտանիշներ: [Symptoms of COVID-19](#) (COVID-19-ի ախտանիշները) կարող են ներառել՝ հազ, հևց,

ջերմություն, դող, հոգնածություն և հոտի կամ համի կորուստ: Վիրուսով վարակվածներից ոմանք ընդհանրապես ախտանիշներ չունեն, իսկ մյուսներն ունեն ախտանիշներ, որոնք տատանվում են մեղմից մինչև ծանր:

Ինչպե՞ս են COVID-19-ի պատվաստանյութերը պաշտպանում COVID-19-ից:

Բոլոր պատվաստանյութերը մեր մարմնին վարակի նման մի բան են փոխանցում, որպեսզի մեր իմունային համակարգը կարողանա սովորել՝ ինչպես արտադրել բնական պաշտպանություն: Այս բնական պաշտպանությունն այնուհետև օգնում է կանխել ապագա հիվանդությունը, եթե ապագայում COVID-19 վիրուսի հետ շփում ունենաք: **Դուք չեք կարող վարակվել COVID-19-ով պատվաստանյութից:**

Ավելի մանրամասն տեղեկատվություն այն մասին, թե ինչպես են COVID-19 պատվաստանյութերը պաշտպանում, կարելի է ստանալ հետևյալ կայքէջում՝ [Public Health Ontario's \(PHO\) COVID-19 Vaccines](#) (Օնտարիոյի Հանրային առողջապահության COVID-19 պատվաստանյութեր), և այստեղ՝ [What You Need to Know About COVID-19 Vaccine](#) (Ինչ է պետք իմանալ COVID-19 պատվաստանյութի մասին) ու [COVID-19 Vaccines: Viral Vector-Based Vaccines](#) (COVID-19 պատվաստանյութեր. վիրուսային վեկտորի պատվաստանյութեր):

Կանադայում օգտագործման համար թույլատրված բոլոր COVID-19 պատվաստանյութերն արդյունավետ են սիմպտոմատիկ, լաբորատոր հաստատված հիվանդություններից պաշտպանվելու համար: Մեծ ուսումնասիրություններում, որոնց ընթացքում մարդիկ ստացել են պատվաստանյութի երկու դեղաչափ, բոլոր պատվաստանյութերը շատ արդյունավետ են եղել՝ սիմպտոմատիկ, լաբորատոր հաստատված COVID-19-ով մարդկանց վարակվածությունը կանխելու համար: Պատվաստանյութի արդյունավետությունն առաջին դեղաչափը ստանալուց 14 օր անց և երկրորդ դեղաչափից առաջ գնահատվում է ավելի քան 90% Pfizer-BioNTech-ի և Moderna-ի համար, և ավելի քան 70% AstraZeneca/COVISHIELD-ի համար: Առաջարկվող ընդմիջումով երկրորդ դեղաչափը ստանալուց հետո պատվաստանյութի արդյունավետությունը գնահատվում է ավելի քան 90% Pfizer-BioNTech-ի և Moderna-ի համար, և ավելի քան 80% AstraZeneca/COVISHIELD-ի համար: Կարևոր է, որ դուք ստանաք այս պատվաստանյութերի երկու դեղաչափ: COVID-19-ի դեմ երկարատև պաշտպանություն հնարավոր չէ ստանալ՝ առանց պատվաստանյութի երկրորդ դեղաչափը ստանալու: **Կանադայում օգտագործման համար թույլատրված COVID-19 պատվաստանյութերը նույնպես շատ արդյունավետ են հոսպիտալացումը կանխելու համար:**

Ո՞վ կարող է ստանալ այս պատվաստանյութերը:

Պատվաստանյութերի ամբողջական շարք պետք է առաջարկել, եթե չկան պատվաստանյութի նկատմամբ հակացուցումներ, և այն մարդկանց, ովքեր ընդգրկված են հաստատված առաջնահերթ խմբերում:

- Pfizer-BioNTech COVID-19 պատվաստանյութը ներկայումս թույլատրված է 16 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար:
- Moderna COVID-19 պատվաստանյութը ներկայումս թույլատրված է 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար:
- AstraZeneca COVID-19 պատվաստանյութը և COVISHIELD-ը ներկայումս թույլատրված են 18 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց համար: Ներկայումս Բմունականիսարգելման ազգային խորհրդատվական կոմիտեն (NACI) [recommends](#) (խորհուրդ է տալիս) չօգտագործել AstraZeneca COVID-19 պատվաստանյութը և COVISHIELD-ը 55 տարեկանից ցածր տարիքի մարդկանց համար:

Բմանալու համար՝ կարող եք արդյոք այս պահին պատվաստվել ըստ առաջնահերթության, ինչպես ենք հետևել [Ontario's COVID-19 vaccination plan](#)-ին (Օնտարիոյի COVID-19 պատվաստումների ծրագիր):

Նախքան պատվաստվելը, ձեզ պատվաստանյութ տրամադրող առողջապահական խնամքի մատակարարին տեղեկացրեք, եթե.

- Ներկայումս վատ եք զգում կամ ունեք COVID-19-ի նշաններ և ախտանիշներ:
- Նախկինում ունեցել եք ալերգիկ ռեակցիա COVID-19 պատվաստանյութի կամ COVID-19 պատվաստանյութերի մեջ պարունակվող ցանկացած բաղադրիչի, կամ որևէ այլ պատվաստանյութի նկատմամբ:
- Ունեք որևէ ալերգիա կամ ալերգիկ վիճակներ:
- Հղի եք կամ կարող եք հղի լինել, կամ կրծքով եք կերակրում:
- Հիվանդության կամ բուժման պատճառով ձեր իմունիտետը ընկել է, կամ ձեզ մոտ ախտորոշվել է աուտոիմուն հիվանդություն:
- Անցած պատվաստումից կամ բժշկական ընթացակարգից հետո ուշաթափվել եք կամ գլխապտույտ եք ունեցել, կամ վախենում եք ասեղներից: Առողջապահական խնամքի մատակարարը կարող է ձեզ օգնել, օրինակ՝ խորհուրդ տալով պատվաստումը ստանալ պահպանելով ուշաթափությունը կանխելու համար:

- Ունեք արյունահոսության խանգարում կամ ընդունում եք դեղեր, որոնք կարող են ազդել արյան մակարդման վրա: Այս տեղեկատվությունը կօգնի առողջապահական խնամքի մատակարարին կանխել ասեղից առաջացած արյունահոսությունը կամ կապտուկները:
- Վերջին 14 օրվա ընթացքում ստացել եք որևէ այլ պատվաստում (ոչ COVID-19 պատվաստանյութ):

[Vaccination Recommendations for Special Populations](#)-ի (Հատուկ խմբերում ներառված բնակչության պատվաստումների վերաբերյալ առաջարկություններ) ուղեցույցը լրացուցիչ տեղեկություններ է տրամադրում այն անձանց, ովքեր հղի են կամ կրծքով են կերակրում, ունեն ալերգիաներ, աուտոիմուն վիճակներ, կամ հիվանդության կամ բուժման պատճառով հիմունային անբավարարություն, ինչպես նաև դեռահասներին, ում մոտ բարձր է COVID-19-ի պատճառով ծանր հետևանքների առաջացման վտանգը: Խոսեք ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ, եթե ձեզ հետաքրքրում է՝ պատվաստանյութը ճիշտ է ձեզ համար, թե ոչ՝ ելնելով ձեր բժշկական վիճակից:

Ո՞վ պետք է հետաձգի այս պատվաստանյութերի ստացումը:

- Անձինք, ովքեր նախորդ 14 օրվա ընթացքում ստացել են մեկ այլ պատվաստանյութ (ոչ COVID-19-ի պատվաստանյութ):
- Սուր հիվանդության ախտանիշներով անձինք: Նրանք պետք է սպասեն, որ ախտանիշները լիովին վերանան, որպեսզի խուսափեն հիվանդության հետևանքով որևէ բարդություն վերագրել պատվաստանյութերի հետ կապված կողմնակի ազդեցություններին:
- Անձինք, ովքեր ունեն COVID-19-ի ախտանիշներ: COVID-19-ի փոխանցման ռիսկը նվազագույնի հասցնելու նպատակով, եթե այդ անձինք հասնեն պատվաստման կլինիկա/վայր, նրանց հանձնարարվելու է հետևել տեղական հանրային առողջապահական ընթացիկ միջոցառումներին, և նրանց խրախուսելու են թեստ հանձնել:
- Ախտանիշներ ունեցող և չունեցող անձինք, որոնց խորհուրդ են տվել ինքնամեկուսանալ կասկածվող կամ հաստատված COVID-19-ի վարակի պատճառով, կամ որոնք սերտ շփման մեջ են եղել COVID-19 վարակակրի հետ, չպետք է գնան պատվաստման կլինիկա և պետք է սպասեն իրենց պատվաստմանը մինչ մեկուսացման շրջանի ավարտը:

Ինչպե՞ս է կատարվում պատվաստումը:

Պատվաստումը կատարվում է ասեղի միջոցով՝ վերին թևի հատվածում (դեղտոիդ մկանի մեջ): COVID-19 Pfizer-BioNTech, Moderna և AstraZeneca/COVISHIELD պատվաստանյութերի առաջին դեղաչափից մինչ երկրորդ դեղաչափի ընդունման ընդմիջումը 4 ամսով երկարացնելու համար մարզը հետևում է [recommendations from the National Advisory Committee on Immunization \(NACI\)](#)-ին (Իմունիկացիայի ազգային խորհրդատվական կոմիտեի (NACI) առաջարկություններ):

- Pfizer-BioNTech պատվաստանյութի պարագայում խորհուրդ է տրվում երկրորդ դեղաչափը ստանալ առաջինից 4 ամիս հետո:
- Moderna պատվաստանյութի պարագայում խորհուրդ է տրվում երկրորդ դեղաչափը ստանալ առաջինից 4 ամիս հետո:
- AstraZeneca և COVISHIELD պատվաստանյութերի պարագայում խորհուրդ է տրվում երկրորդ դեղաչափը ստանալ առաջինից 4 ամիս հետո:

Ամբողջ պատվաստման շարքի ընթացքում անհատները պետք է ստանան նույն COVID-19 պատվաստանյութը (այսինքն՝ անձը պետք է ստանա նույն պատվաստանյութը և՛ առաջին, և՛ երկրորդ դեղաչափերի ժամանակ): Տարբեր տեսակի պատվաստանյութերը (օրինակ, mRNA, վիրուսային վեկտոր) պետք է համարվեն տարբեր պատվաստանյութեր և չպետք է օգտագործվեն նույն շարքերում:

Որո՞նք են պատվաստանյութերի բաղադրիչները:

Բաղադրիչներ		Pfizer-BioNTech	Moderna	AstraZeneca/ և COVISHIELD
Բժշկական		<ul style="list-style-type: none"> mRNA 	<ul style="list-style-type: none"> mRNA 	<ul style="list-style-type: none"> Չկրկնօրինակող վիրուսային վեկտոր (ChAd)
Ոչ-բժշկական	Լիպիդներ	<ul style="list-style-type: none"> ALC-0315 ALC-0159 – պոլիէթիլենգլիկոլ (PEG) 1,2-Distearoyl-sn-glycero-3-phosphocholine (DSPC) Խոլեստերին 	<ul style="list-style-type: none"> 1,2-distearoyl-sn-glycero-3-phosphocholine (DSPC) Խոլեստերին PEG2000 DMG SM-102 	<ul style="list-style-type: none"> Disodium edetate դիհիդրատ (EDTA) Էթանոլ L- Հիստիդին L- Հիստիդինի հիդրոքլորիդ մոնոհիդրատ Պոլիսորբատ 80
	Աղեր	<ul style="list-style-type: none"> Դիաբազ նատրիումի ֆոսֆատ դիհիդրատ Մոնոբազային կալիումի ֆոսֆատ Կալիումի քլորիդ Նատրիումի քլորիդ 	<ul style="list-style-type: none"> Քացախաթթու Նատրիումի ացետատի տրիհիդրատ Տրոմեթամին Տրոմեթամին հիդրոքլորիդ 	<ul style="list-style-type: none"> Մագնեզիումի քլորիդ հեքսահիդրատ Նատրիումի քլորիդ
	Շաքար	<ul style="list-style-type: none"> Սախարոզ Ներարկման ջուր 	<ul style="list-style-type: none"> Սախարոզ Ներարկման ջուր 	<ul style="list-style-type: none"> Սախարոզ Ներարկման ջուր

Կարևոր է ուշադիր ուսումնասիրել այս ցուցակը, քանի որ որոշ մարդիկ կարող են ալերգիա ունենալ այս բաղադրիչների նկատմամբ, ներառյալ՝ **պոլիէթիլենգլիկոլի (PEG) և պոլիսորբատ 80-ի և/կամ տրոմեթամինի**: Այնուամենայնիվ, դրանք հազվադեպ են առաջացնում ալերգիկ ռեակցիաներ: Պոլիէթիլենգլիկոլը (PEG) կարելի է հանդիպել այնպիսի ապրանքատեսակներում, ինչպիսիք են՝ դեղորայքները, կոլոնոսկոպիայի համար աղիների նախապատրաստման միջոցները, լուծողականները, հազի օշարակները, կոսմետիկան, մաշկի քսուքները, մաշկի վրա և վիրահատությունների ժամանակ օգտագործվող բժշկական միջոցները, ստամի մածուկը, կոնտակտային ոսպնյակները և կոնտակտային ոսպնյակների լուծույթը: Պոլիէթիլենգլիկոլը հանդիպում է նաև սննդի կամ խմիչքի մեջ, բայց հայտնի է, որ այն չի առաջացնում է ալերգիկ ռեակցիաներ սննդից կամ խմիչքից: Պոլիսորբատ 80-ը հանդիպում է բժշկական պատրաստուկներում (ինչպիսիք են՝ վիրամիներին յուղերը, դեղահաբերը և հակաքաղցկեղային միջոցները) և կոսմետիկայի մեջ: Տրոմեթամինը մի բաղադրիչ է, որն օգտագործվում է կոնտրաստային նյութերում, բերանի խոռոչով ընդունվող և պարանոտերալ դեղամիջոցների մեջ:

Որո՞նք են պատվաստանյութի կողմնակի ազդեցությունները:

COVID-19 պատվաստանյութերը, ինչպես բոլոր պատվաստանյութերը, կարող են կողմնակի ազդեցություններ առաջացնել, չնայած ոչ բոլոր մարդիկ են դրանք ունենում, իսկ նրանք, ովքեր ունենում են, հիմնականում նշում են աննշան կողմնակի ազդեցություններ: COVID-19 պատվաստանյութ ստանալուց հետո ամենատարածված կողմնակի ազդեցությունները տեղայնացված ռեակցիաներն են, ներառյալ՝ ներարկման տեղում ցավ, կարմրություն կամ այտուց, հոգնածություն, գլխացավ, մկանային ցավ, հոդացավ, դող և ցածր ջերմություն:

Այս COVID-19 պատվաստանյութերի վերաբերյալ ընթացիկ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մինչ օրս հայտնաբերված լուրջ կողմնակի ազդեցությունները **չափազանց հազվադեպ են**: Մարդիկ, ովքեր այս ուսումնասիրությունների ընթացքում պատվաստվել են, շարունակում են վերահսկվել՝ ավելի երկարաժամկետ կողմնակի ազդեցությունների հայտնաբերման համար:

Հիվանդանոցի աշխատակիցները պատրաստված են և կարող են բուժել ծանր ալերգիկ ռեակցիաները, եթե դրանք առաջանան: COVID-19 պատվաստանյութի երկրորդ դեղաչափը ստանալիս **տեղեկացրեք երկրորդ դեղաչափը ներարկող**

առողջապահական խնամքի մատակարարին, եթե ունեցել եք որևէ կողմնակի ազդեցություններ առաջին դեղաչափից հետո:

Շատ հազվադեպ դեպքերում պատվաստումից հետո AstraZeneca/COVISHIELD պատվաստանյութը կարող է հանգեցնել թրոմբի հազվագյուտ ձևի: Բժիշկներն այն անվանում են պատվաստանյութով պայմանավորված պրոտոմբոզային իմունային [thrombocytopenia](#) (VIPIT) (թրոմբոցիտոպենիա): Այս թրոմբերն ունեն երկու կարևոր հատկություններ. դրանք առաջանում են պատվաստումից 4-ից 20 օր հետո և կապված են ցածր թրոմբոցիտների հետ (արյան փոքր բջիջներ, որոնք արյունահոսությունը կանգնեցնելու համար օգնում են ձևավորել թրոմբեր): VIPIT-ը, կարծես, հազվադեպ է հանդիպում, և այն լինում է՝ սկսած 125,000 մարդուց 1-ի մոտ մինչև 1 միլիոն մարդուց 1-ի մոտ: Այն առավել հաճախ հանդիպում է 55 տարեկանից ցածր տարիքի կանանց մոտ: Լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք կարդալ [VIPIT Following AstraZeneca COVID-19 Vaccination](#) (VIPIT՝ AstraZeneca COVID-19 պատվաստումից հետո):

[Health Canada](#)-ն (Կանադայի Առողջապահության նախարարությունը) գնահատել է դա և որոշել, որ կանադացիներին COVID-19-ից պաշտպանելու գործում AstraZeneca/COVISHIELD պատվաստանյութի օգուտները շարունակում են գերազանցել վտանգները: Թրոմբերը տարածված են, հատկապես տարեց մարդկանց շրջանում: COVID-19-ն ինքնին առաջացնում է թրոմբեր, ուստի COVID-19-ի բոլոր պատվաստանյութերը շարունակում են առաջարկվել այն մարդկանց, ովքեր նախկինում ունեցել են թրոմբեր, կամ ովքեր ընտանիքում ունեն թրոմբերի պատմություն և ընդունում են արյունը նոսրացնող դեղամիջոցներ:

Ե՞րբ պետք է զանգահարեմ իմ առողջապահական խնամքի մատակարարին:

Եթե զգում եք կողմնակի ազդեցություններ, որոնք ձեզ անհանգստացնում են, կամ մի քանի օրից չեն վերանում, կապվեք ձեր առողջապահական խնամքի մատակարարի հետ կամ դիմեք բժշկի:

Եթե պատվաստանյութը ստանալուց հետո երեք օրվա ընթացքում ունեք հետևյալ անբարենպաստ ռեակցիաներից որևէ մեկը, գնացեք մոտակա **շտապ օգնության բաժանմունք կամ զանգահարեք 911՝**

- եղնջացան
- դեմքի կամ բերանի այտուց

- դժվարեցված շնչառություն
- գունատություն և լուրջ քնկոտություն
- բարձր ջերմություն (40°C-ից բարձր)
- ցնցումներ կամ նուստեր
- այլ լուրջ ախտանիշներ (օրինակ՝ ծակծկումներ կամ թմրություն)

Եթե ստացել եք AstraZeneca/COVISHIELD պատվաստանյութը, և այն ստանալուց հետո ձեզ մոտ ի հայտ է եկել ներքոնշյալ ախտանիշներից որևէ մեկը, **խնդրում ենք անհապաղ դիմել բժշկական օգնության՝**

- հևոց
- ցավ կրծքավանդակում
- ձեռքի կամ ոտքի այտուց կամ սառնություն
- որովայնի մշտական ցավ
- ուժեղ կամ վատթարացող գլխացավեր կամ աղոտ տեսողություն
- բազմաթիվ մանր կապտուկներ, մաշկի տակ կարմիր կամ մանուշակագույն բծեր կամ արյան բշտիկներ

Կարող եք նաև կապվել ձեր [local public health unit](#)-ի (տեղական հանրային առողջապահության ստորաբաժանում) հետ՝ հետաքրքրող հարցերն իրենց ուղղելու կամ անբարենպաստ ռեակցիայի մասին զեկուցելու համար:

Ե՞րբ պետք է վերադառնամ երկրորդ դեղաչափը ստանալու համար:

Եթե սա COVID-19 պատվաստանյութի ձեր առաջին դեղաչափն է, անպայման վերադարձեք երկրորդ դեղաչափը ստանալու համար, ինչպես հանձնարարված է պատվաստման կլինիկայի կամ ձեր առողջապահական խնամքի մատակարարի կողմից, ով ձեզ ներարկել է առաջին դեղաչափը: Կարևոր է, որ դուք ստանաք պատվաստանյութի երկու դեղաչափ, քանի որ COVID-19-ի դեմ պաշտպանությունն օպտիմալ է միայն պատվաստանյութի երկրորդ դեղաչափը ստանալուց հետո: Երկրորդ դեղաչափը ստանալիս բերեք ձեր պատվաստումների քարտը: **Շատ կարևոր է, որ դուք ստանաք երկրորդ դեղաչափը, նույնիսկ եթե առաջին անգամ կողմնակի ազդեցություններ եք ունեցել:**

Ու՛մ դիմել հարցերի դեպքում:

Հարցերի դեպքում խնդրում ենք գրուցել ձեր առողջապահական խնամքի մատակարարի կամ պատվաստանյութը տրամադրող անձի հետ: